Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 255 - Ա
որոշման

«ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի նոր առանձնատներով կառուցապատվող տարածքներում ջրամատակարարումը ապահովելու նպատակով նախատեսվում է կառուցել ներտնտեսային ցանցեր:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայր, համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	24,127,977 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայր
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի ապրիլի 27-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է Բերքաբեր բնակավայրի նոր առանձնատներով կառուցապատվող տարածքներում կառուցել ջրամատակարարման ներտնտեսային ցանցեր: Կիրականացվեն բաշխիչ համակարգի ճյուղերի կառուցում, խողովակաշարերի անցկացում, ջրամատակարարման և ճնշման կարգավորիչ հորերի տեխնոլոգիական փոփոխությունների

		իրականացում, ջրագծերը առանձնատներին միացնելու աշխատանքներ: Իրականաց-վելու է՝ 2026 թվականի ապրիլի 27-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում՝ 24,127,977 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Բերքաբեր բնակավայրի նոր առանձնատներով կառուցապատվող տարածքներում ջրամատակարարման ներտնտեսային ցանցերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 24,127,977 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ